ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 մարտի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

34
(2700)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԴԽ-Ն ՍԿՍԵՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը պատրաստվում է մի նոր գործընթացի: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այսօր ԲԴԽ-ն ծանուցումներ կուղարկի Հայաստանում գործող բոլոր դատարաններին՝ առաջարկելով ԲԴԽ դատավոր անդամի թեկնածություններ առաջարկել: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ապրիլի 9-ին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի երկու դատավոր անդամները կլքեն իրենց պաշտոնները: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ապրիլին 9-ին լրանում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներ Սերգեյ Չիչոյանի եւ Անի Մխիթարյանի պաշտոնավարման ժամկետները, ուստի նրանք կհեռանան ԲԴԽ-ից: Նկատենք, որ Ստեփան Միքայելյանի պաշտոնավարման ժամկետը եւս լրանում է ապրիլին, սակայն նա նախընտրեց ավելի շուտ դիմում գրել եւ հեռանալ ԲԴԽ անդամի բարձր պաշտոնից: Այսպիսով, ԲԴԽ գիտնական անդամների բոլոր թափուր տեղերն այսօրվա դրությամբ լրացված են, իսկ դատավորների համար նոր պայքարի դաշտ է բացվում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հայրենի իրավապահ համակարգում ինչ-ինչ խմորումներ են ծավալվում: Դեռ Ամանորին խոսակցություններ են պտտվել այն մասին, որ քաղաքական իշխանությունները դժգոհ են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի գործունեությունից, եւ ինքն էլ է հասցրել շատ տեղեր դժգոհել, թե հոգնել է ծանր աշխատանքից, անգամ կառավարական կաբինետում բարձրացվել է Սասուն Խաչատրյանի ազատման հարցը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Սասուն Խաչատրյանի փոխարեն, որպես լավագույն թեկնածու, տեսել են գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանին, որը պրոֆեսիոնալ քննիչ է եւ հեռանկարային պաշտոնյա: Իրավապահ համակարգում լուրեր կան, որ Խաչատրյանը հասցրել է կարգավորել է իր գործերը քաղաքական իշխանության հետ եւ դեռ շարունակում է պաշտոնավարել: Որքան ժամանակ՝ ապագայում կերեւա:



«Ժողովուրդ» օրաթերթը առաջինն էր հայտնել, որ հունվարին ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի խումբ պատգամավորների օգնականները, «շեֆերի» գիտությամբ, պարգեւավճար են պահանջել ԱԺ նախագահից եւ աշխատակազմի ղեկավարից: Ինչպես գրել էինք, ստորագրահավաքը նախաձեռնել ու կառավարել են ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, նրա օգնականը, ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, նրանց օգնականներն ու իշխող խմբակցության փորձագետները: Ի դեպ, պատգամավորների օգնականները, ի վերջո, հասան իրենց նպատակին եւ ոչ միայն ստացան պարգեւավճարներ՝ հունվար ամսվանից սկսած, այլեւ կստանան ողջ 2023 թվականը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները այսքանով չեն սահմանափակվել: Պարզվում է՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Լիլիթ Մինասյանը, որ առանձնապես ակտիվ չէ այս կամ այն անարդարության դեպքերին արձագանքելիս, դեկտեմբերին դիմել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին եւ ԱԺ աշխատակազմի նախկին ղեկավար Վահան Նարիբեկյանին եւ նրանցից հաշիվ է պահանջել, թե որ պատգամավորների օգնականներն են պարգեւավճար ստացել, եւ ինչու իր օգնականը չի ստացել: Այս դիմումի մասին նա բարձրաձայնել է նաեւ խմբակցության գործընկերների հետ հանդիպումների ժամանակ՝ դժգոհելով, որ ուշացրել են իր պատասխանը: Այս թեմայի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց պատգամավորի հետ, որը չհերքեց մեր տեղեկությունը, որ նման դիմում է գրել, միայն արդարացավ, թե 1.5 ամիս է՝ օգնական չունի, իր օգնականը դուրս է եկել աշխատանքից, ինքն էլ հիմա նոր օգնական է փնտրում: Հուսանք՝ մեր հրապարակումը կօգնի տիկին Մինասյանին՝ գտնելու նոր օգնական, որը, իհարկե, ողջ 2023 թվականը կստանա պարգեւավճար:



Աշնանը սպասվող Երեւանի ավագանու ընտրություններին ընդառաջ՝ «Ապրելու երկիր» կուսակցությունն ակտիվացել է ու որոշել է Մարտի 8-ի «պատրվակով» փաստացի կաշառել երեւանաբնակներին: «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը մարտի 8-ին Երեւանի փողոցներում ֆիքսել է «Ապրելու երկիր» կուսակցության անվանական տուփերով շրջող քաղաքացիների: Մեր լրագրողի հետ զրույցում քաղաքացիները պատմեցին, որ Մարտի 8-ի առթիվ նվերներ են ստացել «Ապրելու երկիր» կուսակցությունից: Խնդրեցինք նրանց բացել տուփերից մեկը եւ պարզեցինք, որ մեջը ոչ թե բնամթերք էր, այլ կանացի շարֆիկ: Հիշեցնենք՝ նախկինում էլ Արթուր Բաղդասարյանի «Օրինաց երկիրն» էր «ընտրամուրաբաներ» բաժանում քաղաքացիներին: Փաստորեն, «Ապրելու երկիր» կուսակցությունը, որ օրուգիշեր նորարարություններից, զարգացումից է խոսում, որոշել է տարբերվել ու, սննդի փոխարեն, աքսեսուարներով սիրաշահել քաղաքացիներին. գուցե ՕԵԿ-ի քաղցր մուրաբաներով ավելի դժվար է եղել քաղաքացիների սիրտը շահել: Այլ կերպ ասած, «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիրներ Մանե Թանդիլյանը եւ Մեսրոպ Առաքելյանը, որոնք մշտապես խոսում են «անկաշառ» եւ թափանցիկ ընտրությունների կարեւորության մասին, որոշել են հետ կանգնել իրենց սկզբունքներից:

ՍԱՆԿՑԻԱՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Արցախում ստեղծված ճգնաժամը գնալով խորանում է: Ադրբեջանը ոչ միայն փակել է Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, ավելին՝ օրեր առաջ էլ ադրբեջանական դիվերսիոն խումբը կրակել է Արցախի ոստիկանության հերթափոխի մեքենայի վրա, ինչի հետեւանքով Արցախի երեք ոստիկան մահացել էին: Հակառակորդը նույնպես կորուստներ կրել է:

Ադրբեջանը տարբեր պատրվակներով հրաժարվում է բանակցությունների դուրս գալ ոչ միայն հայկական, այլ նաեւ ռուսական կողմին ընդառաջ: Արցախում ստեղծված իրավիճակի, Ադրբեջանի վարած ապակառուցողական քաղաքականության մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ադրբեջանագետ Անժելա Էլիբեգովայի հետ:

- Տիկին Էլիբեգովա, ըստ Ձեզ՝ ի՞նչը կարող է ստիպել Ադրբեջանին վերադառնալ բանակցային դաշտ:

-Ադրբեջանի համար կա բանակցությունների ընդունելի մի տարբերակ. իրենք պատրաստ են բանակցել միայն արցախահայերի ռեինտեգրման շուրջ, այսինքն՝ Ադրբեջանը չի դիտարկում որեւէ քննարկում՝ ինքնորոշման իրավունքի հետ կապված, հետեւաբար խոսել այն մասին, որ Արցախը պետք է ինքնուրույն բանակցի Բաքվի հետ, այս պահին իրատեսական չէ: Հայաստանի իշխանությունները փաստացի ձեռքները լվացել են Արցախից եւ հրաժարվում են բանակցել ինքնորոշման իրավունքի շուրջ, հետեւաբար եթե մենք խոսում ենք Ադրբեջանի հետ բանակցություններից, ապա դրանք շատ սահմանափակ ռեսուրս ունեն. կան սահմանափակ հարցեր, որոնց շուրջ Ադրբեջանը պատրաստ է բանակցել:

-Վերջերս Ադրբեջանը խոշոր սադրանք է իրականացրել Արցախի հատվածում, ինչի հետեւանքով զոհեր ունեցանք:

Ստացվում է՝ Ադրբեջանը ոչ միայն շրջափակման մեջ է պահում Արցախի մեր հայրենակիցներին, այլ նաեւ սպառնում է նրանց ֆիզիկական անվտանգությանը:

-Նման սադրանքներն Ադրբեջանի համար սովորական են, երբ իրենց բանակցային պահանջները չեն բավարարվում, իրենք ուժով ստիպում են գնալ զիջումների: Մենք վերջին երկու տարիներին անընդհատ սա տեսնում ենք:

-Հաագայի դատարանն իր որոշմամբ պարտավորեցրել է Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, որն արդեն 80 օրից ավելի է՝ փակ է, սակայն Ադրբեջանն անտեսում է դատարանի որոշումը. ի վերջո, Ադրբեջանը կենթարկվի՞ միջազգային դատարանի որոշմանը:

-Եթե չկա սանկցիաների տեսքով ճնշում Ադրբեջանի վրա, ինքը կարող է թույլ տալ իրեն չենթարկվել պահանջներին, որովհետեւ Ադրբեջանն այսօր Եվրոպային գազ է վաճառում, ինչի կարիքն ունի Եվրոպան: Տնտեսական այս համագործակցության հաշվին Ադրբեջանը լոբբինգ է անում իր քաղաքական նկրտումները, իր տեսանկյուններն է առաջ տանում: Այսինքն՝ եթե չլինեն սանկցիաներ (իսկ Եվրոպան սանկցիաների չի գնա, քանի որ Ադրբեջանն իրենց գործընկերն է), ապա Ադրբեջանը կարող է իրեն թույլ տալ չկատարել որոշումներ եւ չենթարկվել միջազգային հանրության ճնշումներին, որոնք բավարար չեն այս պահի դրությամբ: Այն պահից, երբ մենք կխոսենք Ադրբեջանին՝ որպես ագրեսոր ֆիքսելուց, երբ ոչ թե երկու կողմերին զսպվածության կոչեր կանեն, այլ իրերն իրենց անուններով կկոչեն, հստակ կմատնանշեն՝ ով է մեղավոր, գուցե իրավիճակը փոխվի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Երեւանի «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը օրերս 168-ին տված հարցազրույցում հայտարարել է. «Ինձ էլ դատի տվե՛ք, իմ հետեւից էլ ոստիկան ուղարկե՛ք. պաշտոնապես ասում եմ՝ ՀՖՖ-ն աշխատել է օրենքի կողմից խախտումով: Պարո՛ն Մելիքբեկյան, պարո՛ն Նիկողոսյան, դուք ինձ խանգարում եք»: Նա պատմել է, որ ոստիկանները ներխուժել են «Փյունիկ»-ի ակադեմիա, որպեսզի ծանուցում տան «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանին սեփական կարծիք ունենալու համար, եւ դա արել են բավականին հանդուգն ձեւով:

Իսկ ինչի՞ց է սկսվել պատմությունը: Պարզվում է՝ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանը նախորդ տարվա դեկտեմբերի 16-ին հարցազրույց է տվել ու ասել. «Բանակային կենտրոնական մարզական ակումբ սկսեցին հրավիրել վարձատրվող ֆուտբոլիստների, Մելիքբեկյանն ինքը սկսեց զբաղվել ֆուտբոլային թիմի կառավարմամբ, ինչն, իմ կարծիքով, արմատապես հակասում է այն պարտականություններին, որոնք մենք դրել ենք նրա վրա, եւ ամենատխուրն այն է, որ ԲԿՄԱ-2-ը դարձրին բանակից խուսափելու հնարավոր միջոց իրենց ծանոթների եւ ինչ-որ հեղինակությունների համար: Իսկ դա արդեն ես որակում եմ որպես դավաճանություն եւ ֆուտբոլի, եւ ազգային շահերի դեմ, հատկապես հիմա՝ Հայաստանի համար շատ բարդ ժամանակաշրջանում: Խոսքս հիմնավորելու համար ասեմ, որ մեր ակադեմիայում ֆուտբոլիստ կար, ում անունը չեմ ուզում նշել, որպեսզի չվնասեմ երիտասարդ տղային. նրա հայրն աշխատել է ՀՖՖ-ի իրավաբանական բաժնում, իսկ մայրը բարձրաստիճան պաշտոնյա է: Անցյալ տարվա սկզբին նրա հայրը եկավ ակումբ եւ ակադեմիայի գլխավոր թիմի մարզիչից պահանջում էր իր որդուն ներգրավել կազմ, որպեսզի նա հետագայում ընդգրկվի ԲԿՄԱ-ում եւ իր տարիքային հավաքականում: Նա նաեւ սպառնում էր, որ հակառակ դեպքում մարզիչը մեծ խնդիրներ կունենա, քանի որ իրենք ազդեցիկ մարդիկ են: Մեր մարզիչը՝ հայտնի սերբ մասնագետ Գորան Ալեկսիչը, տարակուսած զանգահարեց ինձ եւ ասաց, որ ֆեդերացիայի աշխատակցից հրահանգներ եւ անգամ սպառնալիքներ է ստանում, բայց հրաժարվում է դրանք կատարել, այդ դիրքում կան նույն տարիքի եւ նույնիսկ նրանից երիտասարդ, բայց շատ ավելի ուժեղ ու որակյալ ֆուտբոլիստներ: Ես ստուգեցի այդ տեղեկությունը, բոլոր մարզիչները հաստատեցին, որ այդ ֆուտբոլիստը միջին մակարդակի որակներ ունի, եւ կան շատ ավելի տաղանդավոր տղաներ այդ տարիքային խմբում: Ի վերջո, հայրը Մելիքբեկյանի միջոցով որդուն տեղավորել է մեկ այլ ակումբ, որտեղ նա ոչ մի խաղ չի անցկացրել, իսկ հետո նրան գրանցել են Մ-19 հավաքականում եւ ԲԿՄԱ-2-ում»: Այսինքն՝ ՀՖՖ-ն ԲԿՄԱ-ն վերածել է բանակից փախչողների ակումբի: Այն մարդիկ, որոնք ուզում են՝ իրենց երեխան լավ պայմաններում ծառայի բանակում, «դասավորում են»՝ հայտնվի ԲԿՄԱ-ում, իբրեւ թե պիտի շարունակի իր ֆուտբոլային կարիերան նաեւ բանակում, սակայն իրականում, երբ ծառայության ժամկետն ավարտվում է, նրանք թողնում են ֆուտբոլը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հրապարակումներ ունեցել է: Եւ հիմա Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը եւ տեղակալ Արմեն Նիկողոսյանը այս ճշմարտությունը բացահայտելու համար որոշել են ոստիկաններով հարաբերվել ֆուտբոլ աշխարհի ներկայացուցիչների հետ: Ունենալով Նիկոլ Փաշինյանի անվերապահ աջակցությունը՝ ՀՖՖ նախագահը արշավ սկսեց «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատիրոջ դեմ (դատի է տվել եւ այլն):

Իսկ ինչ վերաբերում է այն երիտասարդին, ում մասին խոսել է «Փյունիկ»-ի սեփականատերը, ապա, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, նա Տիգրան Սարգսյանն է, որի մայրը ՀՀ ՏԿՆ Գնել Սանոսյանի տեղակալ Քրիստինե Ղալեչյանն է, իսկ հայրը՝ Դավիթ Սարգսյանը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի հավատարիմ անձը, որը ՀՖՖ Բողոքարկման կոմիտեում է, ՀՖՖ գործկոմի անդամ է: Համենայնդեպս, նրա տվյալներն են համընկնում Սողոմոնյանի խոսքերի հետ: Հիշեցնենք, որ ԲԿՄԱ թիմում ընդգրկված՝ 1-ին զորակոչի 23 ֆուտբոլիստներից այս պահին 9-ը չեն զբաղվում ֆուտբոլով:

Բացահայտումները՝ առաջիկայում:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏ ԷՐ

«Թուրքիան ի սկզբանե ներգրավված է եղել արցախյան խնդրում եւ պատերազմում. սա գլոբալ հայ-թուրքական պատերազմ է, այսինքն՝ մեր դեմ պատերազմում են Թուրքիան եւ Ադրբեջանը համատեղ: Եթե 90-ականներին դա արվում էր անուղղակի, արդեն 44-օրյա պատերազմում Թուրքիայի ներգրավվածությունը բացահայտ էր եւ՛ ռազմական, եւ՛ քաղաքական առումներով»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասել է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը. «Թուրքիան շարունակում է իր անվերապահ աջակցությունը Ադրբեջանին Հայաստանի ու Արցախի դեմ պայքարում»:

Այն կարծիքը, թե Թուրքիան տարբերակված մոտեցում է ցուցաբերում կամ փորձում է հանդես գալ որպես միջնորդ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ, թյուր պատկերացում է»,-ասում է Ռուբեն Մելքոնյանը:

Ո՞ՒՐ Է ՀԱԱԳԱՆ

«Ո՞ւր է Հաագան, ինչ եղավ Հաագայի դատարանի որոշումը, որն այդքան PR-ում էր Նիկոլ Փաշինյանի «պերֆեկտ TV-ն». ասում էին, թե բոլոր հնարավոր միջազգային հարթակներում Հայաստանը հաղթել է, մի կողմ դնենք՝ միջազգային հանրությունն ինչպես էր մեկնաբանում Հաագայի դատարանի որոշումը»,- ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել է «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանը: «Հաագայի որոշումն ընդամենը Փաշինյանի PR ակցիայի համար էր արվում, ոչ մի տեղ ինքնորոշման իրավունքի մասին խոսք չկար, ոչ էլ ուղիղ ընդգծում կար այն խնդրի, որ 120,000 արցախցիներ գերության մեջ են: Այդ մարդիկ ամեն օր բախվում են նոր խոշտանգումների, ամեն օր թուրք-ադրբեջանական տանդեմի ագրեսիան իրենց գլխին կանգնած է: Ակնհայտ է, որ այս ամենը շարունակական գործընթաց է լինելու»,- ասում է պատգամավորը:

Նյութերը՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ



Իրավապահ մարմինները չեն կարողանում վերադարձնել Աննա Հակոբյանին պատկանող շուրջ 4 միլիոն արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերը: Բանն այն է, որ նոյեմբերի 10-ին ՀՀ վարչապետին հատկացված կեցավայր մուտք գործած անձը ոսկյա զարդերը գրավադրել էր գրավատանը եւ ժամանակին չի կատարել գրավադրման պարտավորությունները, եւ գրավատունը այն վաճառել է: ԱԱԾ-ն հայտնաբերել է գրավատնից այն գնած քաղաքացուն, որն էլ խոստովանել է, որ ինքն էլ գնած ոսկին վերավաճառել է, ու այսպես իրավապահները չեն կարողանում զարդերը հետ վերադարձնել:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 3 տարի անց նոր հանգամանք էր հայտնում 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում եւ պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում բռնություն գործադրելով, ջարդ իրականացնելու դեպքերով:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ Տիգրան. Պ.-ն 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, գնացել է Երեւան քաղաքի Զորափի 74 հասցեում գտնվող ՀՀ կառավարական կեցավայրի մոտ եւ միացել այնտեղ հավաքված զանգվածային անկարգությունների մասնակիցներին:

Այնուհետեւ Տ. Պ-ն քայլել է դեպի ՀՀ վարչապետին հատկացված առանձնատուն, մուտք է գործել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հատկացված առանձնատուն, որից հետո զանգվածային անկարգության մի շարք մասնակիցների հետ ներս է մտել առանձնատան 2-րդ հարկում գտնվող ննջասենյակ, բացահայտ հափշտակել է ՀՀ վարչապետի կնոջը՝ Աննա Հակոբյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 3.920.000 ՀՀ դրամ արժողությամբ տարբեր տեսակի ոսկյա զարդերը, այդ թվում՝ զարդատուփի մեջ գտնված ոսկյա ժամացույցը, շղթաները, կախազարդը եւ ապարանջանը:

Դրանից հետո Տ. Պ-ն իր կողմից բացահայտ հափշտակված վերոհիշյալ ոսկյա զարդերը տնօրինել է անձնական նպատակներով եւ 551.000 ՀՀ դրամի դիմաց 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 10:25-ի սահմաններում, ընկերոջ՝ Ս. Ս-ի, իսկ շղթաներից մյուսը՝ 40.000 ՀՀ դրամի դիմաց՝ իր անվամբ 2020 թվականի նոյեմբերի 16-ին գրավադրել է «Ֆաստ կրեդիտ» ՈՒՎԿ գրավատան համապատասխանաբար Կոմիտաս պողոտայում եւ Մալաթիա վարչական շրջանում գտնվող մասնաճյուղերում: Տիգրան Պ.-ն կալանավորված է:

«ԱՂՄԿՈՏ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ»

ՓՈՐՁՈՒՄ Է ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՂԵԼ

Մարտի 7-ին Ադրբեջանի պաշտպանական գերատեսչությունը տարածել է միջազգային հանրությանը մոլորեցնելու նպատակ հետապնդող հերթական հաղորդագրությունը, իբրեւ թե նույն օրը ՀՀ ԶՈՒ ռազմական տեխնիկայի շարասյունը ՌԴ խաղաղապահների ուղեկցությամբ անցել է Ստեփանակերտ-Ղայբալիբեն-Լիսագոր ճանապարհով, եւ որ, իբրեւ թե, նույն ճանապարհով տեղի է ունեցել ՀՀ ԶՈՒ անձնակազմի փոխադրում:

Պաշտոնապես շեշտում ենք, որ սույն տեղեկատվությունն ամբողջությամբ կեղծ է, չունի եւ չի կարող ունենալ որեւէ փաստական հենք եւ աղերս իրականության հետ:

Նմանօրինակ «աղմկոտ բացահայտումներով» Ադրբեջանը փորձում է միջազգային հանրության ուշադրությունը շեղել՝

1. Մարտի 5-ին իր զինված ուժերի կողմից իրականացված ահաբեկչական ակտից, որին զոհ են գնացել Լեռնային Ղարաբաղի ՆԳՆ ոստիկանության անձնագրային ծառայության երեք աշխատակիցներ, մեկ աշխատակից վիրավորվել է,

2. Լաչինի միջանցքի առնչությամբ Արդարադատության միջազգային դատարանի՝ իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումն իր կողմից չկատարելու եւ ի հեճուկս այդ որոշման՝ Լաչինի միջանցքը փակ պահելու փաստից,

3. 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ՝ Լաչինի միջանցքի վերաբերյալ իր ստանձնած միջազգային պարտավորությունները չկատարելու փաստից:

Այս ակնհայտ փաստերից միջազգային հանրության ուշադրությունը շեղելու համար Ադրբեջանը որդեգրել է ապատեղեկատվության ու լարվածության աճի գործելակերպ՝ փորձելով կեղծ տեղեկատվական հիմքեր ստեղծել ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլեւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ նոր ագրեսիա ծավալելու համար: Ընդ որում՝ Ադրբեջանն այդ քաղաքականությունն «արդարացնելու» համար շարունակում է Արեւմուտքում Հայաստանին որպես ծայրահեղ ռուսամետ, իսկ Ռուսաստանում՝ ծայրահեղ արեւմտամետ ներկայացնելու իր քաղաքականությունը:

Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ որեւէ ռազմամթերք կամ ռազմական նշանակության ապրանք Լաչինի միջանցքով չի տեղափոխվել ինչպես մինչեւ դրա շրջափակումը, այնպես էլ 2022թ. դեկտեմբերի 12-ից հետո: Ավելին, վերահաստատում ենք, որ Լեռնային Ղարաբաղում Հայաստանի Հանրապետությունը բանակ չունի: Այս տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Լեռնային Ղարաբաղ միջազգային փաստահավաք առաքելություն գործուղելու առաջարկը բազմիցս մերժվել է հենց Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության կողմից:

Վերահաստատելով Հայաստանի՝ տարածաշրջանում խաղաղության հասնելու ձգտումը՝ եւս մեկ անգամ ընդգծում ենք Լեռնային Ղարաբաղ եւ Լաչինի միջանցք միջազգային փաստահավաք առաքելության անհապաղ գործուղման անհրաժեշտությունը՝ կանխելու Ադրբեջանի կողմից նոր ագրեսիայի սանձազերծումը եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին էթնիկ զտումների ու ցեղասպանության ենթարկելու Ադրբեջանի ակնհայտ նախապատրաստությունները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԵՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ ԱՆՑՆԵԼ ՍԱՀՄԱՆԸ

Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի նախկին ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը հայտարարել է, որ երեկ ավարտվել են իր նախաձեռնած լրագրողի վարպետության դասընթացները:

Վերջինս ցավոտ անակնկալ է որակել այն, որ ունկնդիրների առաջ վարպետաց դասով հանդես գալու համար Հայաստան է ժամանել հայազգի լրագրողներից եւ մեդիամենեջերներից մեկը՝ «Նյուզ Մեդիա» ընկերության ղեկավար Արամ Գաբրելյանովը, սակայն օդանավակայանում նրան թույլ չեն տրվել հատել երկրի սահմանը:

Ըստ Սողոմոնյանի՝ Գաբրելյանովին պատճառաբանել են, որ նա անցանկալի անձ է Հայաստանում եւ կարող է ապակայունացնել վիճակը երկրում:

«Արդյունքում, ընդամենը 24 ժամով մեր երկիր ժամանած Գաբրելյանովը ստիպված եղավ մոտակա չվերթով վերադառնալ Մոսկվա»,- հավելել է Սողոմոնյանը:

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը կոչ է արել Ներկայացուցիչների պալատի իր գործընկերներին 100 միլիոն դոլար հատկացնել Հայաստանին, եւ 50 միլիոն դոլար՝ Արցախին:

Ֆրեն Փալոնեն նամակով դիմել է Ներկայացուցիչների պալատի արտաքին գործողությունների հատկացումների ենթահանձնաժողովի նախագահ Մարիո Դիաս-Բալարտին եւ բարձրաստիճան անդամ Բարբարա Լիին, որում կոչ է արել նաեւ 2 միլիոն դոլար հատկացնել ականազերծման աշխատանքների համար եւ ապահովել «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածի կատարումը, որով սահմանափակվում է ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանի կառավարությանը տրամադրվող ռազմական օգնությունը, ինչպես նաեւ ճնշում գործադրել Ադրբեջանի վրա, որպեսզի վերջինս ազատ արձակի հայ ռազմագերիներին, որոնք պետք է ազատ արձակվեին՝ դեռեւս 2020 թվականի նոյեմբերին ստորագրված եռակողմ հայտարարության համաձայն:

Նամակում նշվում է, որ Լաչինի միջանցքը արգելափակելու եւ բժշկական, սննդի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների հասանելիության շարունակական սահմանափակումը առաջացրել են «անհաղթահարելի կարիքներ», ուստի այսօրվա դրությամբ ԱՄՆ կառավարության կողմից տրամադրվող օգնությունը լիովին անբավարար է:

Հայաստանի անվտանգության ամրապնդման եւ տարածաշրջանում ժողովրդավարության պաշտպանության նպատակով նամակում նաեւ կոչ է արվում Հայաստանին օգնություն ցուցաբերել իր ինքնիշխանության պաշտպանության գործում՝ ադրբեջանական էքսպանսիայի եւ ավտորիտարիզմի դեմ պայքարում:

ԹԱՔՑՐԵԼ Է

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Հ.Բ.-ն, 2009 թվականի հունվարի 26-ից մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 5-ը զբաղեցնելով ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնը, ապա՝ 2018 թվականի մարտի 22-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀԱՊԿ միացյալ շտաբի պետի տեղակալի պաշտոնը, 2017, 2018, 2019 եւ 2020 հայտարարագրերում թաքցրել է գույքերի եւ եկամուտների վերաբերյալ տվյալները:

Մասնավորապես, Հ.Բ.-ն 2018 թվականի փետրվարի 26-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել հայտարարագիր, որում նշել է, որ իր անվամբ շարժական գույքեր առկա չեն, դրամական միջոցներ չունի, իսկ որպես եկամուտ հայտարարագրել է 6.43 դրամ, մինչդեռ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի դրությամբ վերջինիս անվամբ հաշվառված են եղել 102 մլն 665 հազար դրամով ձեռք բերված MERCEDES-BENZ S500L 4MATIC, MERCEDES-BENZ S450 4MATIC եւ VAZ 21011 մակնիշների ավտոմեքենաներ: Պաշտոնը դադարեցնելու օրվա դրությամբ նրա բանկային հաշվեհամարներին առկա է եղել տարբեր արժույթներով շուրջ 2 մլն 37 հազար 125 դրամին համարժեք գումար, բացի այդ, նշված ժամանակահատվածում Հ.Բ.-ի բանկային հաշվեհամարները եկամտի տեսքով համալրվել են շուրջ 174 մլն 358 հազար 867 դրամով:

2018 թվականի մարտի 22-ից Հ.Բ.-ն նշանակվել է ՀԱՊԿ միացյալ շտաբի պետի տեղակալի պաշտոնին: 2018 թվականի հունիսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել հայտարարագիր՝նշելով, որ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ իր անվամբ առկա է MERCEDES-BENZ S500 մակնիշի ավտոմեքենա, ունի 864 հազար 493 ՌԴ ռուբլի, որը 2018 թվականի մարտի 22-ի դրությամբ համարժեք է եղել 7 մլն 296 հազար 320 դրամին: Հ.Բ.-ի անվամբ, մինչդեռ, հաշվառված են եղել MERCEDES-BENZ S450 4MATIC եւ VAZ 21011 մակնիշների ավտոմեքենաներ, բանկային հաշվեհամարներին առկա է եղել տարբեր արժույթներով շուրջ 14 մլն 904 հազար 669 դրամ (հայտարարագրած գումարից 7 մլն 608 հազար 349 դրամով ավելի):

2019 թվականի ապրիլի 12-ին ներկայացրած տարեկան հայտարարագրում Հ.Բ.-ն նշել է, որ հարկային տարում շարժական գույք չի օտարվել, որպես եկամուտ հայտարարագրել է ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն ստացված 2 մլն 880 հազար ՌԴ ռուբլի: Մինչդեռ 2018 թվականի հունիսի 23-ին Հ.Բ.-ն իր անվամբ հաշվառված MERCEDES-BENZ S450 4MATIC մակնիշի ավտոմեքենան նվիրատվության պայմանագրով օտարել է դստերը: Բացի այդ, 2018 թվականի ընթացքում Հ.Բ.-ի բանկային հաշվեհամարները եկամտի տեսքով համալրվել են շուրջ 28 մլն 747 հազար 168 դրամով, որում ներառված չի եղել ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն ստացված գումարը:

Հ.Բ.-ն, 2020 թվականի մայիսի 19-ին ներկայացրած տարեկան հայտարարագրում նշել է, որ տվյալ տարվա սկզբում իր անվամբ հաշվառված է MERCEDES-BENZ S500 մակնիշի ավտոմեքենա, իսկ որպես եկամուտ հայտարարագրել է ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն 3 մլն ՌԴ ռուբլի, մինչդեռ հայտարարագրման տարվա սկզբում Հ.Բ.-ի անվամբ հաշվառված է եղել VAZ 21011 մակնիշի ավտոմեքենա, իսկ բանկային հաշվեհամարները եկամտի տեսքով համալրվել է շուրջ 20 մլն 579 հազար 945 դրամով, որում ներառված չի եղել ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն ստացված գումարը:

2021 թվականի մարտի 1-ին ներկայացրած հայտարարագրում Հ.Բ.-ն նշել է, որ իր անվամբ հաշվառված է MERCEDES-BENZ S500 մակնիշի ավտոմեքենա, իսկ որպես եկամուտ հայտարարագրել է ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն 2 մլն 940 հազար ՌԴ ռուբլի, մինչդեռ Հ.Բ.-ի անվամբ հաշվառված է եղել VAZ 21011 մակնիշի ավտոմեքենա, բացի այդ, 2020 թվականի ընթացքում՝ մինչեւ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրը, Հ.Բ.-ի բանկային հաշվեհամարները եկամտի տեսքով համալրվել են շուրջ 196 մլն 330 հազար 475 դրամով, որում ներառված չի եղել ՀԱՊԿ-ից որպես աշխատանքի վարձատրություն ստացված գումարը:

Դատախազի որոշմամբ՝2023 թվականի մարտի 6-ին Հ.Բ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 01.08.2003 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (5 դրվագ), որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասին (հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը, որը հանգեցրել է գույքի եւ առանձնապես խոշոր չափերով եկամուտների չհայտարարագրմանը):

Հ.Բ.-ի նկատմամբ կիրառվել են համակցված այլընտրանքային խափանման միջոցներ, այդ թվում՝ բացակայելու արգելքը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂՈՒՄ

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզները մարտի 6-ին Այնթապ գյուղում հայտնաբերել եւ բաժին են տարել 38-ամյա Սերգեյ Ա.-ին, որը հետախուզվում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի (Հակամրցակցային գործունեությունը) մեղադրանքով:

Նա ներկայացվել է նախաքննական մարմին:

Խափանման միջոցը՝բացակայելու արգելք:

ԿՆՈՋԻՑ ԳՈՒՄԱՐ ԵՆ ՀԱՓՇՏԱԿԵԼ

Մարտի 3-ի երեկոյան ոստիկանության Արտաշատի բաժին ստացվել էր հաղորդում 42-ամյա մի կնոջից: Մարտի 1-ին նա գյուղի կանգառում նկատել էր հայտարարություն՝ «Վարկեր՝ սեւ ցուցակում գտնվող անձանց» բովանդակությամբ: Մարտի 2-ին կինը զանգել էր հայտարարության մեջ նշված հեռախոսահամարին:

Հայտնել էին, որ իր խնդրած 450 հազար դրամ վարկը հաստատվել է, եւ պահանջել էին իրենց տրամադրած հաշվեհամարին փոխանցել 20 հազար դրամ:

Այնուհետեւ մարտի 3-ին նույն հեռախոսահամարից զանգել էին կնոջն ու պահանջել փոխանցել եւս 25 հազար դրամ: Կինն այդ անգամ էլ էր փոխանցել, ինչից հետո նրա զանգերին չէին պատասխանել:Ոստիկանությունը հորդորում է լինել ուշադիր եւ զգոն, գործարքների մեջ չմտնել կասկածելի մարդկանց եւ կազմակերպությունների հետ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱԶՄՎԵԼ Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության (ՔՏՀԱ) տեսչական մարմինը պարեկային ծառայողների հետ համատեղ մարտի 7-ին վերահսկողություն է իրականացրել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ:

Ինչպես տեղեկացնում են ՔՏՀԱ-ի տարածած հաղորդագրությունից, տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության վարչության մասնագետները մշտադիտարկել են 5 տրանսպորտային միջոց:

Վերահսկողության արդյունքում 5 տրանսպորտային միջոցների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման արձանագրություններ՝ առանց համապատասխան լիցենզիայի փոխադրումներ իրականացնելու համար:

Տեսչական մարմինը հիշեցնում է, որ վերահսկողությունը լինելու է պարբերական, եւ հորդորում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ուղեւորափոխադրումներ իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում, այլապես կիրառվելու են վարչական պատասխանատվության միջոցներ՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի:

ՍՏՈՒԳՎԵԼ ԵՆ ՏԱՔՍԻՆԵՐԸ

2023 թվականի մարտի 7-ին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը պարեկային ծառայողների հետ համատեղ վերահսկողություն է իրականացրել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ:

ՔՏՀԱ տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության վարչության մասնագետները մշտադիտարկել են 5 տրանսպորտային միջոց:

Վերահսկողության արդյունքում 5 տրանսպորտային միջոցի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման արձանագրություններ՝ առանց համապատասխան լիցենզիայի փոխադրումներ իրականացնելու համար:

Տեսչական մարմինը հիշեցնում է, որ վերահսկողությունը լինելու է պարբերական, եւ հորդորում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ուղեւորափոխադրումներ իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում, այլապես կիրառվելու են վարչական պատասխանատվության միջոցներ՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 81 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է 2022Թ.-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 7-ին այցելել է Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, ծանոթացել կառույցի 2022 թվականի կատարողականին, գործունեության արդյունքներին եւ առաջիկա ծրագրերին: Վարչապետին նախ ներկայացվել են 2022 թվականին կատարված շինբարեկարգման աշխատանքները: Ըստ զեկույցի՝ նախորդ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կատարվել են երկու անգամ ավելի մեծ ծավալի շինբարեկարգման աշխատանքներ, քան նախորդ հինգ տարիները միասին վերցված, ըստ այդմ՝ 2017-2021թթ. իրականացվել է 545 մլն 613 հազար դրամի, իսկ 2022-ին՝ 1 մլրդ 289 մլն 959 հազար դրամի: Ներկայացվել են նաեւ ՔԿՀ շենքային պայմանների բարելավման առաջիկա ծրագրերը. նախատեսվում է, որ դրանց ծավալը կհասնի 2 մլրդ 52 մլն դրամի: Ներկայումս ընթացքի մեջ են նոր ՔԿՀ-ի կառուցման մրցույթի կազմակերպման աշխատանքները: Վերջինիս կառուցման արդյունքում նախատեսվում է փակել Երեւանում գործող 4 ՔԿՀ: Զեկույցի համաձայն՝ Քրեակատարողական համակարգի պատմության մեջ առաջին անգամ ներդրվել է օտարերկրյա քաղաքացիներին պետական միջոցների հաշվին թարգմանչական ծառայություններ մատուցելու ծրագիր, քանի որ ՔԿՀ-ներում անազատության մեջ ամսական պահվում է մոտ 125 օտարերկրյա քաղաքացի: 2022թ. կատարվել է 304 թարգմանություն:

Հանդիպմանը քննարկվել են օպերատիվ ստորաբաժանման նոր մոդելի ներդրման հետ կապված ծրագրերը, առաջարկվել է Կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության ստեղծման տարբերակը: Ներակայացվել են նաեւ «Արմավիր» ՔԿՀ-ում կառավարման նոր մոդելի ներդրման հետ կապված ծրագրերը. արդյունքում նախատեսվում է ստեղծել Կանոնակարգի կառավարման բաժին: Ավտոտրանսպորտային միջոցների օպտիմալացման հետ կապված զեկուցվել է, որ քրեակատարողական ծառայության հաշվեկշռում առկա է եղել թվով 82 տրանսպորտային միջոց, որից 11 տրանսպորտային միջոց հանձնվել է Պետական գույքի կառավարման կոմիտե, 6 տրանսպորտային միջոցի հանձնումը ընթացքի մեջ է: 2022թ. տարեվերջին ձեռք է բերվել 10 նոր հատուկ նշանակության տրանսպորտային միջոց, մնացորդը կազմում է թվով 75 տրանսպորտային միջոց: Առաջարկվել է ձեռք բերել թվով 16 էլեկտրոմոբիլ, դուրս գրել եւս 26 տրանսպորտային միջոց, որի արդյունքում ակնկալվում է տարեկան մինչեւ 58 մլն դրամի տնտեսում, պետական գույքային ֆոնդի թարմացում, ծառայության արդյունավետության բարձրացում: Անդրադարձ է եղել նաեւ 2022թ. անազատության մեջ գտնված անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալներին: Մասնավորապես, նշվել է, որ ՔԿՀ-ներում ընդհանուր առմամբ պահվում է 2265 դատապարտված եւ կալանավորված անձ: Ընդհանուր առմամբ, հանրապետության ՔԿՀ-ները նախատեսված են 4491 անձի համար, այսինքն՝ բեռնվածության հետ կապված խնդիրներ ներկայումս չկան: Քննարկվել են նաեւ ազատությունից զրկված անձանց կրթության ապահովմանը, վերասոցիալականացման այլ միջոցառումներին, դատապարտյալների աշխատանքային զբաղվածությանը վերաբերող հարցեր:

ՇԱՎԱԼՆԵՐԸ ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆ

ԽՈՒԶԱՐԿՎԵԼ ԵՆ 10-ԻՑ ԱՎԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Ապօրինի թմրաշրջանառությունը, որպես մարդկության առողջության դեմ ուղղված հանցագործություն, չարիք է ամբողջ աշխարհում:

Ցավոք, ապօրինի թմրաշրջանառության ծավալները մեծանում են՝ պայմանավորված նաեւ տեխնոլոգիաների զարգացմամբ: Խնդրով մտահոգված են նաեւ պետական ու ոչ պետական շահագրգիռ կառույցներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք բազմիցս այդ մասին բարձրաձայնել ու բարձրաձայնում են: Հաշվի առնելով ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի գործում ձեւավորված միասնական մոտեցումն ու արդյունավետ հակազդելու ուղղությամբ համատեղ քայլեր ձեռնարկելու միակարծությունը՝ ՆԳ նախարարության ոստիկանությունը 2023 թվականը հայտարարել է ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի տարի: Եվ պատահական չէ, որ հատկապես վերջին մի քանի ամսվա ընթացքում հայտնաբերվել ու քրեական պատասխանատվության դաշտ են բերվել համացանցի միջոցով թմրամիջոցներ իրացնող անձինք, ու փակվել են տելեգրամյան բազմաթիվ ալիքներ: Չարիքին առավել պրոֆեսիոնալ հակազդելու համար Քրեական ոստիկանության գլխավոր վարչության կազմում ձեւավորվեց համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ստորաբաժանումը, որը գործունեության առաջին իսկ օրերից տպավորիչ արդյունքներ է արձանագրում: Առհասարակ, ապօրինի թմրաշրջանառության դեպքեր են բացահայտվում ոստիկանության բոլոր ծառայությունների կողմից: Կարող ենք արձանագրել, որ բացահայտումների թիվն էականորեն աճել է նաեւ պարեկային ծառայության ներդրման արդյունքում: Այդ համատեքստում առանձնացնենք պարբերաբար իրականացվող ուժեղացված ծառայությունները եւ, իհարկե, օպերատիվ-հետախուզական 24-ժամյա գործունեությունը՝ որպես ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի առանցքային գործիք:

Ներկայացնենք այդ միջոցառումներից մի քանի դրվագ, որոնք օրերս արձանագրվել են Շիրակի մարզում: Այսպես, ոստիկանության Շիրակի մարզային վարչությունում եւ ենթակա տարածքային ստորաբաժանումներում ստացված օպերատիվ տեղեկությունների եւ քննչական մարմիններում նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում մարտի 3-ին ոստիկանության հիշյալ ստորաբաժանումների եւ Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողներն ու նախաքննական մարմինների աշխատակիցները խուզարկել են 10-ից ավելի բնակարան եւ օժանդակ շինություններ: Հայտնաբերվել են 1 կիլոգրամ 100 գրամից ավելի մարիխուանա, կանեփի սերմեր, կաթուցիչներ, թմրամիջոց պատրաստելու պարագաներ: Խուզարկություններն արդյունավետ էին նաեւ զենք-զինամթերքի առգրավման առումով: Հայտնաբերվել են տարբեր տեսակի հրազեններ, այդ թվում՝ «Կալաշնիկով» ինքնաձիգ, ատրճանակներ, հրացան, տարբեր տեսակի ռազմամթերք եւ այլն: Ձերբակալվել եւ նախաքննական մարմին են ներկայացվել մի խումբ անձինք:

Տպավորիչ է նաեւ Շիրակի պարեկների՝ օրերս արձանագրած բացահայտումներից մեկը: Նրանք գիշերային ծառայության ընթացքում Գյումրու Երեւանյան խճուղում ձերբակալել են երկու տղամարդու, որոնցից մեկը թմրանյութով փաթեթներ էր տեղադրում: Տարածքի զննությամբ իրավապահները հայտնաբերել էին կշեռք եւ մարիխուանայի նմանվող զանգվածներով 16 փաթեթ, իսկ նրանց մեքենայի սրահում մարիխուանայի նմանվող զանգվածներով մի քանի տասնյակ փաթեթ կար: Այդ դեպքից օրեր առաջ էլ Մուշի ոստիկաններն էին ձերբակալել թմրամիջոցով փաթեթներ տեղադրող տղամարդու եւ հետագա գործողություններով հայտնաբերել թմրամիջոցով հարյուրից ավելի փաթեթ: Հետեւաբար, ակտիվացվելու եւ առավել պարբերական են դառնալու ապօրինի թմրաշրջանառությանը հակազդելու միջոցառումները, որոնց արդյունքների մասին հասարակությունը կիրազեկվի ամենօրյա ռեժիմով:

ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐ

ՈՂ ԴԵՊՔԵՐՈՒՄ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ

Ցավը կրծքավանդակում կարող է կապված լինել սիրտ-անոթային հիվանդությունների հետ, բայց միշտ չէ, որ այն լուրջ հիվանդության ազդանշան կարող է լինել:

Անգամ եթե կրծքավանդակում առաջ եկած ցավն ուժեղ է, այն կարող է կապված լինել այնպիսի վիճակների հետ, որոնք լուրջ սպառնալիք չեն պարունակում: Մասնավորապես, դա կարող է տեղի ունենալ սթրեսի, տագնապայնության, երկարատեւ նյարդաբանական խախտումների հետ:

Ինչպե՞ս հասկանալ, որ կրծքավանդակում առաջ եկած ցավը վտանգավոր է:

Տեւողությունը. ուժեղ կայուն ցավը վկայում է բժշկի դիմելու անհրաժեշտության մասին. ասել են Times of India պարբերականի բժշկական փորձագետները: Նրանք խորհուրդ են տվել դիմել օգնության, եթե ցավը հինգ րոպե հետո չի անցնում:

Ախտանշանները. եթե կրծքավանդակում առաջ եկած ցավը լուրջ խնդիրներ է ստեղծում, ապա հավելյալ կարող են առաջանալ՝

հեւոց
սառը քրտինք
սրտխառնոց
հոգնածություն
թուլություն, վատ զգացողություն
խառնափնթոր գիտակցություն
ձեռքերի, մեջքի, ծնոտի ցավեր:

Ինչի՞ մասին է վկայում կրծքավանդակում առաջացած ժամանակավոր անհարմարության զգացողությունը: Երբ ծակող ցավը կրծքավանդակում առաջ է գալիս հանկարծակի եւ շատ կարճ է տեւում (ակնթարթ), դա կարող է բացատրվել կողերի վնասվածքով կամ մկանների ձգմամբ, ինչպես նաեւ կրծքավանդակի բորբոքմամբ, ֆիբրոմիալգիայով կամ գոտեւորող լիշայով՝ հիվանդություն, որը նման է ջրծաղկին:

Կրծքավանդակի ցավ աջ կողմում. այն հաճախ կապված է թոքերի խնդիրների հետ, օրինակ՝ առաջ է գալիս թոքաբորբի կամ մեկ այլ թոքային վարակի դեպքում, ասթմայի նոպաների ժամանակ:

Կերակրափողի սպազմներ. գոյություն ունի խանգարում, որի դեպքում առաջ են գալիս կերակրափողի անոմալ վիճակներ. մարդը հանկարծակի ուժեղ ցավ է զգում կրծքավանդակում, որը տեւում է մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամ: Այդ ցավը հեշտությամբ կարելի է շփոթել ստենոկարդիայի հետ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՄՐՈՒԿԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Մարտի 8-ի ժամը 10:00-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կարմրուկի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը հասել է 39-ի: Նրանցից 18-ը հոսպիտալացված են, 14-ը չեն հոսպիտալացվել, 7-ը՝ դուրս են գրվել:

Այս մասին տեղեկացնում է ՀՀ առողջապահության նախարարությունը:

Հիվանդների առողջական վիճակը գնահատվում է միջին ծանրության, 2-ինը՝ ծանր: 39 վարակվածից 36-ը պատվաստված չէ, 3-ը պատվաստված է մեկ դեղաչափով:

Հիշեցնենք, որ պատվաստումների ազգային օրացույցով կարմրուկի դեմ պատվաստումները նախատեսված են 1 եւ 4-6 տարեկան երեխաների համար:

Կարմրուկի դեմ պլանային պատվաստումներ չստացած երեխաների ծնողներին հորդորում ենք դիմել հաշվառման պոլիկլինիկա եւ պատվաստել երեխաներին:

Միաժամանակ, պատվաստման են ենթակա նաեւ կարմրուկով հիվանդների հետ շփված այն անձինք, որոնք չունեն կարմրուկի դեմ 2 դեղաչափ պատվաստում:

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳ Է ՍԱՀՄԱՆՎԵԼ

Հաշվի առնելով ստեղծված վիճակը եւ տնտեսական շրջափակման հետեւանքով շուկայում իրացվող ապրանքատեսակների սղությունն ու գնագոյացման հետ կապված խնդիրները, տնտեսվարող սուբյեկտների կողմից չարաշահման դեպքերը՝ մարտի 7-ից Արցախի Հանրապետության կողմից ընդունվել է ապրանքների շրջանառության հատուկ կարգ:

Այս մասին տեղեկացնում է ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը:

Նոր կարգի՝ ուժի մեջ մտնելուց հետո տնտեսվարող սուբյեկտները պետք է նախապես ԱՀ հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովին ներկայացնեն այն ապրանքների ցանկը, որոնք նախատեսում են իրացնել. հանձնաժողովը դրանց համար սահմանելու է շուկայում իրացման առավելագույն գին, որը խախտելու դեպքում տնտեսվարող սուբյեկտները ենթարկվելու են վարչական տույժի՝ 500.000-1.000.000 դրամի չափով:

Գործընթացի նկատմամբ վերահսկողություն է իրականացվելու տեղական ինքնակառավարման մարմինների, վարչակազմերի ղեկավարների, Պետական եկամուտների կոմիտեի, Հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի եւ Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կողմից:

Երեկ եւ այսօր կկազմակերպվի տնտեսվարող սուբյեկտներին իրազեկելու գործընթացը, որից հետո ԱՀ կառավարության կողմից սահմանված կարգը կիրառության մեջ կմտնի:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՋԵԿՈՒՅՑ

Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը հրապարակել է զեկույց ադրբեջանական զինված ուժերի դիվերսիոն խմբի կողմից մարտի 5-ին իրականացված ահաբեկչական գործողության մասին:

Զեկույցում ամփոփված են ահաբեկչական գործողության վերաբերյալ Արցախի ՄԻՊ հաստատության կողմից հավաքագրված փաստերը, որոնք ստացվել են իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում իրավասու մարմիններից եւ բաց աղբյուրներից:

Ըստ հավաքագրված փաստերի՝ նախօրոք պլանավորված ահաբեկչական գործողությունը տեղի է ունեցել մարտի 5-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում:

«Ոստիկանական մեքենան Ստեփանակերտից շարժվել է 09:30-ի սահմաններում, մինչ այդ կայանված էր Արցախի ՆԳՆ ոստիկանության վարչական շենքի դիմաց: Մեքենայի անձնակազմը բաղկացած էր 4 ոստիկաններից՝ փոխգնդապետ Արմեն Մայորի Բաբայան, մայոր Դավիթ Վալերիի Դանիելյան, լեյտենանտ Արարատ Թելմանի Գասպարյան եւ լեյտենանտ Դավիթ Աշոտի Հովսեփյան:

Հավաքագրված փաստերից հստակ երեւում է, որ մեքենան շարժվում է Ստեփանակերտից, ուստի անհիմն եւ կեղծ են ադրբեջանական կողմի այն պնդումները, թե, իբր, մեքենայով հայկական կողմը Հայաստանի Հանրապետությունից զենք-զինամթերք էր տեղափոխում Արցախ: Ստեփանակերտից մեկնող արցախցի ոստիկանների մեքենայում եղել են միայն ծառայողական փաստաթղթեր ու նրանց տաբելային զենքը:

Մոտավորապես 30-40 րոպե երթեւեկելուց հետո մեքենայի անձնակազմը նկատել է, որ ճանապարհի երթեւեկելի հատվածում շարված են քարեր, որոնք խանգարում են երթեւեկությանը: Մեքենան կանգ է առել:

Քարերի հետեւից դուրս են եկել ադրբեջանական դիվերսիոն խմբի 5 անդամներ՝ զինվորական հագուստով, դիմակավորված, ինքնաձիգերով զինված եւ ինքնաձիգերի փողերը դեպի մեքենան ուղղած:

Մեքենայի վարորդը փորձել է հետ պտտել ավտոմեքենան, սակայն նույն պահին ադրբեջանական դիվերսիոն խմբի նշյալ 5 անդամները՝ դիմացից, ինչպես նաեւ ճանապարհի աջ եւ ձախ հատվածում դարանակալած դիվերսիոն խմբի եւս 10 անդամներ սկսել են կրակահերթեր արձակել ավտոմեքենայի ուղղությամբ: Կրակահերթերը շարունակվել են մոտ 10 րոպե:

Մեքենայի արտաքին զննությունը հստակ ցույց է տալիս, որ մեքենայի ուղղությամբ ադրեջանական դիվերսիոն խմբի կողմից արձակվել են հարյուրավոր գնդակներ:

Կրակը դադարելուց հետո ադրբեջանական դիվերսիոն խմբի 3 անդամներ մոտեցել են մեքենային, ենթադրաբար զնել մեքենան, հսկողական կրակոցներ արձակել մեքենայի վարորդի եւ վարորդի մոտ նստած ուղեւորի ուղղությամբ: Սակայն, ըստ փրկված ոստիկանի վկայության, ադրբեջանցիները մեքենայի հետնամասի սրահի դուռը չեն բացել՝ ենթադրաբար չնկատելով, որ հետնամասի սրահում եւս ուղեւորներ կան:

Այնուհետեւ ադրբեջանական դիվերսիոն խմբի անդամները սկսել են հեռանալ հանցագործության վայրից դեպի ճանապարհի հանդիպակաց բարձունքում տեղակայված իրենց զինված հենակետեր:

Ադրբեջանցիների հետ քաշվելու ընթացքում հայկական կողմից բացված պատասխան կրակի հետեւանքով ադրբեջանական դիվերսիոն խմբի անդամների շրջանում եղել են զոհեր եւ վիրավորներ:

Ահաբեկչական հարձակումից մոտ 30-40 րոպե հետո տեղ են ժամանել ռուսական խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչները: Նրանց միջամտությունից հետո կրակը դադարեցվել է:

Ռուսական կողմի միջամտությունից հետո ադրբեջանական կողմը շարունակել է հետ քաշվել՝ իր հետ տանելով ադրբեջանական դիվերսիոն խմբի զոհված անդամներին եւ վիրավորներին:

Ռուսական խաղաղապահները Ա. Գասպարյանին եւ Դ. Հովսեփյանին տեղում ցուցաբերել են առաջին բուժօգնություն եւ տեղափոխել հիվանդանոց:

Ադրբեջանական հարձակման հետեւանքով փոխգնդապետ Արմեն Բաբայանը, մայոր Դավիթ Դանիելյանը տեղում զոհվել են, իսկ լեյտենանտ Արարատ Գասպարյանը մահացել է հիվանդանոց տեղափոխվելիս: Լեյտենանտ Դավիթ Հովսեփյանը ստացել է կրծքավանդակի հրազենային վիրավորում եւ գտնվում է հանրապետական բժշկական կենտրոնում: Նա վիրահատվել է, գտնվում է վերակենդանացման բաժանմունքում՝ բժիշկների հսկողության տակ. նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Զեկույցը պատրաստվել է բաց եւ փակ տարբերակով՝ հայերեն եւ անգլերեն: Այն ուղարկվել է միջազգային կազմակերպություններին եւ իրավապաշտպան կառույցներին»,- ասվում է Արցախի ՄԻՊ-ի պաշտոնական կայքում:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԵԼ Է ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

«Կոնվերս բանկ»-ը վաղաժամկետ ավարտել է 3 մլրդ ՀՀ դրամ եւ 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումը: Տեղաբաշխված պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը համապատասխանաբար 10.5% եւ 3.75% է, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

Առաջիկայում պարտատոմսերը կցուցակվեն AMX-Հայաստանի ֆոնդային բորսայում, ինչից հետո դրանք կսկսեն շրջանառվել երկրորդային շուկայում:

Անդրադառնալով պարտատոմսերի շուկայում գործունեությանը՝ «Կոնվերս բանկ»-ում նշել են, որ ներկայում բորսայում շրջանառվում է բանկի՝ 5 մլրդ ՀՀ դրամ եւ 10 մլն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմս: Իսկ 2008թ.-ից ի վեր բանկը թողարկել է երեք արժույթով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար եւ եվրո պարտատոմս՝ ընդհանուր 41.6 մլրդ ՀՀ դրամին համարժեք ծավալով:

«Պարտատոմսերը ոչ միայն հավասարեցված են ավանդին եւ ապահովագրված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, այլեւ պարտատոմսերից ստացվող եկամուտները չեն հարկվում եւ համարվում են խնայողությունների դիվերսիֆիկացման լավագույն եղանակներից մեկը»,-նշել են բանկում եւ հավելել, որ առաջիկայում եւս «Կոնվերս բանկ»-ը հանդես կգա նոր թողարկումներով՝ պահպանելով իր տեղը ՀՀ բանկային համակարգի առաջատարների թվում:

Թողարկման եւ տեղաբաշխման մանրամասներին, ծրագրային ազդագրին եւ թողարկման վերջնական պայմաններին կարելի է ծանոթանալ՝ այցելելով մեր պաշտոնական կայքէջ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԼԵՓ-ԼԵՑՈՒՆ

ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԵՐԵՒԱՆՅԱՆ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Կանանց նվիրված ամենասղասված տոնի՝ Մարտի 8-ի առթիվ թատրոնները շարունակեցին իրենց ակտիվ աշխատանքը եւ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց հետաքրքիր ներկայացումներ դիտելու առիթ ընձեռեցին: Ներկայացնում ենք սղասվող բեմադրություններից մի քանիսը: Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում մարտի 8-ին ցուցադրվեց Հակոբ Պարոնյանի «Մեծաղատիվ մուրացկանները» երաժշտական կատակերգությունը: Դեղքերի հանգուցակետում Աբիսողոմ աղան է՝ ամուսնանալու նպատակով Տրապիզոնից Կոստանդնուպոլիս եկած մի մեծահարուստ, որը զուրկ է հոգեկան ու մտավոր հետաքրքրություններից, անտարբեր՝ ազգի եւ մարդկության ճակատագրի հանդեպ: Եվ այս սահմանափակ անձնավորությանը սղասարկելու են գալիս «մեծաղատիվ մուրացկանները»:

Կոնստանտին Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն այցելելով՝ թատերասերները դիտեցին Ալեքսանդր Ցագարելիի «Խանումա» ներկայացումը: Վաճառական Միկիչ Կոտրյանցը՝ աղքատ կոշկակարի որդին, որը հարստություն է կուտակել եւ այժմ ունի սեփական գործարան ու զբաղվում է կոշիկի վաճառքով, երազում է իր դստերը՝ գեղեցկուհի Սոնային ամուսնացնել ազնվական մեկի հետ. իշխանական զինանշանի եւ կնիքի առկայությունը վեր է դասում սեփական դստեր երջանկությունից: Մեծ դժվարությամբ, բայց նրան հաջողվում է հարմար թեկնածու գտնել: Իշխանը թեեւ արդեն շատ ծեր է եւ ողջ հարստությունը վատնել է, բայց իսկական ազնվական է: Սոնան, սակայն, սիրում է իր ֆրանսերենի եւ երաժշտության ուսուցչին՝ Կոտեին: Սերը փոխադարձ է: Խանումա անունով կինը՝ քաղաքի լավագույն միջնորդը, խառնվում է նաեւ այս երիտասարդների գործին...

Սոս Սարգսյանի անվան համազգային պետական թատրոնն իր հանդիսատեսին կներկայացնի «... եւ նորից Գարուն» բեմադրությունը, որի հիմքում աշխարհահռչակ ամերիկացի գրող Օ. Հենրիի հինգ նովելներն են, որոնք միմյանց հերթափոխում են տարվա եղանակների պես՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ եւ նորից գարուն... Դրանք սիրո, անձնազոհության, նվիրումի մասին պատմություններ են՝ գրված հումորով ու այնքան հանճարեղորեն պարզ, ինչպես կարող է միայն Օ. Հենրին: Հերոսները սխրանքներ են գործում, սիրում, ներում, երազում՝ չնկատելով, որ բնության օրենքներն են դրանց շարժառիթը: Ներկայացումը 9-ից 99 տարեկան հանդիսատեսի համար է:

Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում հնարավոր է դիտել Պիեռ Օգյուստեն Կարոն դը Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» պիեսի համանուն ներկայացումը: Բեմադրության ռեժիսոր Գրիգոր Խաչատրյանի խոսքով՝ այս պիեսը սկանդալային է համարվել, քանի որ այն դասակարգային խնդիրներ է առաջ քաշում: «Արգելված էր հակաֆեոդալական ազատամտության համար: Ինձ գրավում է, որ «Ֆիգարոյի ամուսնությունը» պատկանում է դասական կոմեդիայի ժանրին, ունի դասական կառուցվածք: Պիեսում կա ծավալ, որը թատրոնի դերասանին, ռեժիսորին հնարավորություն է տալիս երեւակայության, շարժման տեսանկյունից ճկուն, ակտիվ ներկայացում բեմադրել եւ խաղալ»,-ասում է Խաչատրյանը:

Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Հիշի՛ր վաղվա օրդ» ներկայացումը՝ ըստ Վինա Դելմարի: Այն հուզիչ պատմություն է ընտանիքի, ծնողների եւ զավակների հարաբերությունների մասին:

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում էլ ելույթ կունենա Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոն, Թաթուլ Ալթունյանի անվան երգ-պարի համույթը:

Կանանց նվիրված յուրաքանչյուր տոն գեղեցիկ սեռի դերն ու նշանակությունն ընդգծելու, նրանց մեծարելու, սեր խոստովանելու առիթ է ընձեռում, եւ Մարտի 8-ը բացառություն չէ, սակայն այն ի սկզբանե այլ նշանակություն է ունեցել: Մարտի 8-ը տոնվել է ոչ թե գեղեցիկ սեռի, այլ հեղափոխական կանանց փառաբանելու համար: Այդ օրը այն կանանց տոնն էր, որոնք ձգտում էին տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունենալ:

ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՅՍ Է ՀԱՅՏՆԵԼ

Հայաստանի հավաքականի նախկին խաղացող Արաս Օզբիլիսը հույս է հայտնել, որ Մոսկվայի «Դինամոյի» եւ Ռուսաստանի հավաքականի 19-ամյա կիսապաշտպան Արսեն Զախարյանն ապագայում կխաղա Հայաստանի հավաքականում:

«Կցանկանայի, որ Արսեն Զախարյանը ներկայացներ Հայաստանի հավաքականը: Գլխավորն այն է, որ նա սրտանց ցանկանա ներկայացնել մեր երկիրը: Եթե դա տեղի ունենա, Արսենը վստահաբար որակ կտա մեր հավաքականին:

Իհարկե, Զախարյանը եւ Սպերցյանը հեռու են Մխթարյանից: Նա միակն է այդպիսին: Ուրախ կլինեմ, եթե Արսենն ու Էդուարդը հասնեն հայկական ֆուտբոլի լեգենդի մակարդակին:

Ուրախ եմ, որ Նաիր Տիկնիզյանը դարձավ Հայաստանի հավաքականի խաղացող: Նա հանդես է գալիս առաջատար ռուսական ակումբներից մեկում՝ Մոսկվայի «Լոկոմոտիվում»: Կարծում եմ՝ նա կօգնի մեր երկրին եւ մեր ազգային թիմին»,- ասել է Արաս Օզբիլիսը:

«Լոկոմոտիվի» 23-ամյա պաշտպան Նաիր Տիկնիզյանն առաջին անգամ է հրավիրվել Հայաստանի հավաքական եւ կարող է նորամուտը նշել Թուրքիայի դեմ «Եվրո-2024»-ի ընտրական խաղում, որը տեղի կունենա մարտի 25-ին Երեւանում:

32-ամյա Օզբիլիսն (մարտի 9-ին կդառնա 33 տարեկան) այժմ ներկայացնում է Երեւանի «Ուրարտուն»: Նա կարիերան սկսել է Ամստերդամի «Այաքսի» կազմում, հանդես է եկել նաեւ Մոսկվայի «Սպարտակում», Կրասնոդարի «Կուբանում», իսպանական «Ռայո Վալեկանոյում», թուրքական «Բեշիքթաշում», Տիրասպոլի «Շերիֆում», Երեւանի «Փյունիկում»:

ՉԱՎԻՆ ԱՐԺԱՆԻ Է

Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան ցանկանում է նոր պայմանագիր կնքել թիմի իսպանացի գլխավոր մարզիչ Չավիի հետ:

«Ես կարծում եմ՝ Չավին արժանի է երկարաժամկետ պայմանագրի: Նա ցանկանում է նոր պայմանագիր կնքել, եթե նվաճի Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը: Բայց ես կարծում եմ, որ արդեն հիմա կարելի էր երկարաձգել նրա պայմանագիրը»,- ասել է Լապորտայը:

Չավիի գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս:

Իսպանիայի առաջնության 24 տուրից հետո «Բարսելոնան» 62 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ 9 միավոր առաջ է երկրորդ տեղում գտնվող Մադրիդի «Ռեալից»:

ԼՈՒՍԱՆԿԱՐ

ՔՆՆԱԴԱՏԵԼ ԵՆ ՉԵՊԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մոդել, գործարար եւ ռեալիթի հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը սելֆի է հրապարակել առանց դիմահարդարման եւ վարսահարդարման: Նա կադրը հրապարակել է «Ինստագրամ» սոցիալական ցանցի իր էջում:

42-ամյա Քիմ Քարդաշյանն ատամնաբույժի այցելության ժամանակ լուսանկարվել է աթոռին: Նա կերպարանք է ընդունել բնական կերպարում: Այնուամենայնիվ, որոշ երկրպագուներ առաջարկել են, որ լուսանկարը ռետուշ արվի հատուկ ծրագրերով. «Շատ գեղեցիկ է ֆիլտրերով», «Առանց ռետուշի հնարավո՞ր է», «Ինչո՞ւ ստել, որ սա ազնիվ սելֆի է»:

Նշենք, որ Քիմ Քարդաշյանը նկարահանվել է Dolce & Gabbana-ի գովազդային արշավում: Բրենդին աջակցելու համար աստղը մեկնել է Իտալիա. փետրվարի վերջին Միլանում նա հայտնվեց Dolce & Gabbana բուտիկում, այնուհետեւ նորաձեւության տան ցուցադրությանը, հետո՝ նորաձեւության շաբաթվա շրջանակներում բրենդի մասնավոր երեկույթին: Նա ներկայացել էր ապրանքանիշի արխիվային կիպ զգեստով:

● *Մարտի 10-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա համերգ «Միքայել Թարիվերդիեւ. սպասում»: Տոմսերի արժեքը՝1000- 3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե քաղաքացին ունի հաշմանդամության կարգ եւ էպիկրիզով մոտենում է հիվանդանոց, այդ դեպքում ի՞նչ բժշկական օգնություններից կարող է օգտվել նա: Առանձին-առանձին խնդրում եմ գրել՝ որ կարգի դեպքում որ բուժօգնությունից կարող է օգտվել:

Հենրիկ Աբովյան (70 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հետեւյալ իրավունքներն ու արտոնությունները.

1. ընդգրկված են ՀՀ կառավարության՝ 04.03.2004 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման հավելված 1-ով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում եւ կարող են օգտվել սահմանված՝ անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու արտոնություններից:

2. Ընդգրկված են ՀՀ կառավարության՝ 30.05.2019 թ. N642-Ն որոշմամբ հաստատված անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում, օգտվում են անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից: 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք կարող են օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից («Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթներով սահմանված):

3. Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) կամ ծառայությունների անհատական ծրագրի (ԾԱԾ) հիման վրա աջակցող միջոցներ /պրոթեզներ, օրթեզներ, հենակներ, սայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ եւ այլն/ ստանալու իրավունք՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իսկ ավելի մանրամասն բժշկական մասնագիտական տեղեկատվություն ստանալու համար դիմումատուն կարող է դիմել ՀՀ առողջապահության նախարարություն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ տուգանք է սահմանված աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների մասին տեղեկությունը չներկայացնելու դեպքում, եթե գործատուն սոցիալական վճարներ չի կատարում:

Հովհաննես Հունանյան (50 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաեւ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի՝ 30 մայիսի 2005թ. ««Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» հրամանի հաստատված հրահանգի 23-րդ կետի դրույթներով՝ եթե օրենքներով եւ ՀՀ միջազգային պայմանագրերով սոցիալական վճարները հաշվարկելու եւ պետական բյուջե փոխանցելու պարտականությունը դրված է վարձու աշխատողների վրա, այս դեպքում գործատուն պարտավոր է մինչեւ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմին վերը նշված հրահանգի հավելված 2-ով սահմանված ձեւով տեղեկություններ հայտնել վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների եւ դրանց հավասարեցված եկամուտների մասին:

Այդ պահանջը խախտելու համար գործատուն վճարում է տուգանք՝ լիազորված մարմին չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 25.000 դրամի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ աշխատողի՝ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձեւակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի եւ գրավոր պայմանագրի բացակայության) փաստը ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձեւակերպված աշխատողի համար հաշվարկում եւ վճարում է պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 150.000 դրամի չափով, եթե չձեւակերպված վարձու աշխատողների թվաքանակը չորսից վեց է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Արարատ քաղաքի ճանապարհին

Ահա այսպիսի տեսարանի կարելի է ականատես լինել մարտի 8-ին: Ի՞նչ իմանանք, գուցե ներսում անակնկալներ են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: